ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 717 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N 728-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 3-րդ մասով, 21-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1953-Ա որոշման 9-րդ կետի 3-րդ ենթակետը՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշմամբ (այսուհետ՝ որոշում) հաստատված՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կանոնադրությունում կատարել հետևյալ կառուցվածքային փոփոխությունները՝

1) նախարարության մասնագիտական ստորաբաժանում հանդիսացող հանրային առողջության բաժինը վերակազմավորել հանրային առողջության և առողջապահական ծառայությունների որակի կառավարման վարչության՝ որպես հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում.

2) դադարեցնել նախարարության գործակալություն հանդիսացող պետական առողջապահական գործակալության գործունեությունը:

2. Այդ կապակցությամբ որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 6-րդ կետում, 18-րդ կետի 19-րդ ենթակետում, 20-րդ կետի 2-րդ ենթակետում, 26-րդ կետի 5-րդ, 6-րդ և 8-րդ ենթակետերում, 6-րդ գլխի վերնագրում «գործակալություններ» բառը և դրա հոլովաձևերը փոխարինել «գործակալություն» բառով և համապատասխան հոլովաձևերով.

2) 11-րդ կետում՝

ա. 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, իրականացման չափորոշիչների և ընթացակարգերի, ինչպես նաև պացիենտի վարման գործելակարգերի մշակումը և հաստատումը.»,

բ. 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«8) բյուջետային ծրագրերի շրջանակներում բյուջետային նպատակային ֆինանսավորման ձևավորումը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դրա իրականացման դիտարկումը.»,

գ. 10-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«10) բյուջետային ծրագրերի շրջանակներում կենտրոնացված գնումների իրականացումը, գնումների դիմաց ֆինանսական միջոցների հատկացումը.»,

դ. 20-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«20) առողջապահության կազմակերպման, կառավարման, ֆինանսավորման ու տնտեսավարման ժամանակակից մեխանիզմների, նորմատիվների, չափանիշների, չափորոշիչների մշակումը և հաստատումը.»,

ե. 24-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

զ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 25-րդ և 26-րդ ենթակետերով՝

«25) Հայաստանի Հանրապետությունում առողջության համընդհանուր ապահովագրության կազմակերպման ու իրականացման, բնակչության առանձին խմբերին օրենքով նախատեսված բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի, լրացուցիչ ծառայությունների տրամադրման կազմակերպման քաղաքականության մշակումը.

26) առողջապահական ծառայությունների որակի համընդհանուր կառավարում՝ ներառյալ որակի ապահովմանն ուղղված քաղաքականության և պետական ծրագրերի մշակում, մշտադիտարկում, գնահատում և առողջապահական ծառայությունների որակի կառավարման համակարգի զարգացմանն ուղղված մեթոդաբանության և գործիքակազմի ձևավորում ու ներդրում:».

3) 32-րդ կետում՝

ա. ուժը կորցրած ճանաչել 4-րդ ենթակետը,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ ենթակետով՝

«6) հանրային առողջության և առողջապահական ծառայությունների որակի կառավարման վարչություն.».

4) 34-րդ կետում՝

ա. «գործակալություններն են» բառը փոխարինել «գործակալությունն է» բառով,

բ. ուժը կորցրած ճանաչել 2-րդ ենթակետը:

3. Ստեղծել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության գործունեության դադարեցման աշխատանքները կազմակերպող, ինչպես նաև Առողջության համընդհանուր ապահովագրության պետական հիմնադրամի հետ հանձնման-ընդունման աշխատանքներն իրականացնող հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

4. Հանձնաժողովին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության և Առողջության համընդհանուր ապահովագրության պետական հիմնադրամի միջև հանձնման-ընդունման աշխատանքների իրականացումը և աշխատանքներն ավարտելու վերաբերյալ համապատասխան ակտի կազմումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից՝ բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի, 2-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում հրապարակման օրվանից մեկ ամիս հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

13.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ